ԲԱՁՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ 2016

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

6 ԱՊՐԻԼԻ 2017թ

Հայաստան 0002, ք.Երևան, Թումանյան 41, բն. 4, Հեռ.՝ +37460 378989 +374 60 478989
Էլ.-հասցե՝ newgenerationngngo@gmail.com Վեբ-կայք՝ http://ngngo.net/

Կայացավ «ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ – 2016» լրագրողական մրցանակաբաշխությունը

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն 2017 թ.-ի ապրիլի 6-ին կազմակերպել էր ԼԳԲՏՔԻ անձանց հարցերին առնչվող «ԲԱՁՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ-2016» լրագրողական մրցույթը, որն արդեն երկրորդ տարին է անցկացվում: Մրցույթի կազմակերպումով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն նպատակ ուներ լրագրողներին, միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին երկխոսության հրավիրելու միջոցով բարձրաձայնել ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտումներին առնչվող հիմնախնդիրները՝ շեշտադրելով հանրային լրագրության և քաղաքացիների ներգրավվածության կարևորությունը, ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտման դեպքերը էթիկապես ճիշտ լուսաբանելը:

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔՈՎ ՀԱՆԴԵՍ ԵՆ ԵԿԵԼ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԼԵՆԵ ՎԵԹԵԼԱՆԴԸ, ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ՊԵՏՐ ՄԻԿԻՍԿԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆ ՊԱՐՈՆ ԲԵՐՆՀԱՐԴ ՄԱԹԻԱՍ ՔԻՍԼԵՐԸ:

Հանդիպմանը ներկա են եղել նաև ներկայացուցիչներ Հայաստանում Լիտվայի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի դեսպանատներից, Եվրոպական միության պատվիրակությունից, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, Եվրասիա Համագործակցության հիմնադրամից, ՀՀ Փաստաբանների պալատից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, իրավապաշտպան հասարակական կազմակերպություններից և տարբեր լրատվամիջոցներից:

Բանախոսների ելույթներից հետո «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ -ի ներկայացուցիչ Արման Սահակյանը ներկայացրել է ԼԳԲՏՔԻ անձանց հիմնախնդիրներին առնչվող «ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ-2016» լրագրողական մրցանակաբաշխության արդյունքները:

Մրցանակաբաշխության նպատակն էր միավորել ԶԼՄ-ների ներկայացուցիչների ներուժը ԼԳԲՏՔԻ անձանց հիմնախնդիրների լուսաբանման շուրջ և խրախուսել ոլորտի հիմնահարցերը բարձրաձայնող լրագրողներին: Մրցույթին կարող էին դիմել Երևանի և ՀՀ մարզերի լրատվամիջոցների ներկայացուցիչներն ու անկախ լրագրողները:

Լավագույն լրագրողական նյութի գնահատման հանձնաժողովում ընդգրկված են եղել Epress.am կայքի խմբագիր Յուրի Մանվելյանը, փորձագետ Աննա Նիկողոսյանը, լրագրող Սուրեն Դեհերյանը: Նյութերը գնահատվել են հետևյալ չափանիշներով՝ անաչառություն և օբյեկտիվություն, բազմակողմանիություն, նյութի/թեմայի հանգամանալից ներկայացում, թեմայի ակտուալություն, բովանդակություն և մատուցման ձև:
«Բազմազանություն-2016» լրագրողական մրցույթում հաղթող է ճանաչվել Գայլ Խանդիկյանի և Նանա Շահնազարյանի «Ընդունվածները. ծնողներն աջակցում են իրենց նույնասեռական զավակներին» հոդվածը, որը հրապարակվել է 2016 թ.-ին «Ինչպես դու» լրատվականում: Հոդվածի հեղինակը շնորհակալություն հայտնեց «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին՝ նման մրցանակաբաշխություն ստեղծելու համար, ինչը խրախուսում է ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պրոֆեսիոնալ և օբյեկտիվ լուսաբանումը:

Խրախուսական մրցանակների են արժանացել Լիլիթ Առաքելյանը («Ծեծել, վառել…». նույնասեռականների նկատմամբ բռնությունը խրախուսվում է «վերևներից», ««Քոքից վերացնել», «վառել», «մորթել». Երբ ատելության կոչերի հետեւում երևում են լրատվամիջոցների ստվերները») և Ալինա Նիկողոսյանը («Դաժան իրականություն. Հայաստանում ԼԳԲՏ-ների նկատմամբ վատ վերաբերմունքը պայմանավորված է «բացասական կարծրատիպերով»»):

ՍԵՐԳԵՅ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Մեծարգո դեսպաններ, հարգելի հյուրեր,
շնորհակալություն եմ հայտնում մեր միջոցառման հրավերն ընդունելու համար:

Որպես իրավապաշտպան կազմակերպություն՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մի շատ կարևոր ուղի է որդեգրել, այն է՝ նպաստել մարդկանց, մասնավորապես ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների և շահերի պաշտպանությանը, աջակցել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ-ի կողմից միջազգային իրավական ակտերով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Այս ուղղությամբ մենք մասնավորապես իրականացնում ենք իրավաբանական խորհրդատվություն, իրավական փաստաթղթերի ձևակերպում, դատարաններում և համապատասխան մարմիններում ներկայացուցչության ապահովում և ռազմավարական դատավարություն, կատարում ենք օրենսդրական վերլուծություններ և մշակում ենք համապատասխան առաջարկներ, մշտադիտարկում ենք իրականացնում ինչպես փակ, այնպես էլ ոչ փակ հաստատություններում, տրամադրում ենք ժամանակավոր կացարաններ, հանրային իրազեկման ամենատարբեր միջոցառումների իրականացում:

Ցավում ենք, որ Հայաստանի իշխանությունը պատրաստակամ չէ քաղաքացիական հասարակության հետ պայքարելու ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտումների և նրանց նկատմամբ դրսևորվող խտրականության դեմ: Առավել ցավում ենք, որ հայաստանյան լրատվամիջոցները շատ հաճախ խեղաթյուրում են իրականությունը և դառնում ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ առկա խտրականության, խարանի և ատելության խոսքի վերարտադրողները:

Այս առումով շատ ենք կարևորում միջազգային դիվանագիտական և այլ կառույցների աջակցությունը, որը ուղղակիորեն նպաստում է Հայաստանում հանդուժողականության մթնոլորտի, ավելին՝ ժողովրդավարական արժեքների ձևավորմանը:

Լենե Վեթելանդ Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտե Ողջույնի խոսք

Շատ վայրերում հանդուրժողականությունն ու բազմազանությունը առավել անհրաժեշտ են դպրոցներում և քաղաքականության մեջ, իսկ գենդերային բազմազանությունը, թվում է, թե դուրս է մնում այս դիսկուրսից:
Շատ կարևոր է, թե ինչպես ենք մենք խոսում գենդերի, գենդերային դերերի և սեռային առանձնահատկությունների մասին դպրոցներում, լրատվական միջոցներում և հասարակության մեջ, քանի որ դա շատ մեծ ազդեցություն ունի գենդերային ոչ-բինար կամ բազմազան, ինչպես նաև ԼԳԲՏ անձանց՝ իրենց հիմնարար իրավունքների և ազատությունից օգտվելու հնարավորությունների վրա:

Լրագրողի համար շատ դժվար կարող է լինել գերիշխող թեմատիկ պատկերին ձեռնոց նետելը: Նորվեգիայում էլ, ինչպես Հայաստանում կարծիքներ փոխելը բարդ է եղել: Այնուամենայնիվ, ոմանք դա անում են, և լրագրողների՝ ատելության ու արհամարհանքի դեմ գրված պատմությունները, հոդվածները հանգեցրել են որոշակի փոփոխության, ու դրանք այն հոդվածներն են, որոնք դեռ հիշվում են:
Տեղեկատվության հասանելիությունը շատ կարևոր է այն առումով, որ թույլ է տալիս մարդկանց սեփական կարծիքը ձևավորել:
Տրանսֆոբիկ և հոմոֆոբիկ վերաբերմունքի դաժան մթնոլորտը խոչընդոտում է սեփական կարծիքի ձևավորման ազատությանը:

Այն վերարտադրում է միայն ատելություն և ապատեղեկատվություն: Այսպիսով, խրախուսանքը շատ կարևոր է, և մենք շատ ուրախ ենք, որ կարողացել ենք աջակցել այս ծրագրին:

ՀՀ-ում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեծարգո պրն. Պետր Միկիսկա

Ողջույնի խոսք

Շնորհավորանքներս «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ին և Նորվեգիայի Հելսինկյան Կոմիտեին այս հիանալի մրցույթի համար, քանի որ այն իր բնույթով եզակի է և արժանի է մեր ծափահարություններին:

Երբ ես Հայաստան եկա 2012 թ.-ի մայիսին, ուղղակի ցնցվեցի առաջին իրադարձություններից, որ հանդիպեցի այստեղ. հարձակում տեղի ունեցավ նույնասեռականներին ընդունող բարի վրա, ապա նույն վայրը հրդեհի մատնեցին, և կրակոցներ եղան ԼԳԲՏ համայնքում:

1993 թ.-ից ի վեր Հայաստանը ստորագրել և վավերացրել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի կոնվենցիաների, դաշնագրերի մեծ մասը և այլ իրավական փաստաթղթեր: Ի զարմանս ինձ՝ քաղաքական գործիչների համար այս բոլոր փաստաթղթերը պարզապես թղթի կտոր են: Նրանք հնազանդվում են հասարակության տականքների ատելության կոչերին՝ օրենքի, օրենսդրության և միջազգային պարտավորությունների հանդեպ հարգանքը, իրենց քաղաքացիների պաշտպանությունը խթանելու փոխարեն:

Մենք փորձում ենք աջակցել անհատներին և կազմակերպություններին, և մենք իսկապես խրախուսում ու կարևորում ենք քաղաքացիական հասարակության դերը՝ մարդկանց իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ԼԳԲՏ համայնքի համար տեղ նվաճելու, նրանց ազատություններին և իրավունքներին հասնելու հարցում:
Այնուամենայնիվ, սա հնարավոր չէ անել առանց լրատվամիջոցների, որոնք կարևոր գործիք են հասարակությանը հարգալից վերաբերմունքի մոդելը փոխանցելու ու նրանց վարքագծում աստիճանաբար փոփոխություններ մտցնելու համար:

ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մեծարգո պրն. Մաթիաս Քիսլեր

Ողջույնի խոսք

Շատ շնորհակալ եմ կրկին նման գիտաժողովներին մասնակցելու հրավեր ստանալու համար, որոնք շատ կարևոր են ԼԳԲՏ կյանքի, խտրականության և ատելության խոսքի մասին բարձրաձայնելու տեսանկյունից: Ես՝ ինքս, անձամբ, ինչպես նաև Գերմանիայի կառավարությունը լիովին աջակցում ենք խտրականության դեմ Հայաստանում ձեռնարկվող ցանկացած գործունեությանը:
Կարևոր է խոսքի ազատություն ունենալ Հայաստանում՝ ինչպես քաղաքական, այնպես էլ ԼԳԲՏԻ-ն առնչվող հարցերում: Բարեբախտաբար, համատարած միակարծություն չկա այս հարցի շուրջ, սակայն, համենայն դեպս, գոյություն ունեն խոսքի ազատության սահմանափակումներ, ապատեղեկատվության տարածում, զրպարտություն և ատելության ելույթներ: Մենք բոլորս ակնկալում ենք, որ «Հակախտրականության մասին» օրենքը, ինչպես նաև «Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» օրենքը վերջապես կընդունվեն: Շուտով նոր կառավարություն ու նոր խորհրդարան ենք ունենալու: Հուսով եմ, որ նրանք իրենց ամբողջ եռանդը կներդնեն այս օրենքների ընդունման համար:

Հասարակության վերաբերմունքն ու մոտեցումը նույնպես պետք է աստիճանաբար փոխվեն: Գերմանիայում դրա համար երկար ժամանակ պահանջվեց: Մինչև 1969 թ.-ը տղամարդկանց միջև սեռական հարաբերությունը ոչ միայն արգելված էր, այլև մի քանի տարի բանտում անցկացնելու վտանգ էր պարունակում իր մեջ: Այո, սա ժամանակ է պահանջում, բայց, միևնույնն է, դա արդարացում չէ: Լրատվամիջոցների հարցում էլ պետք է զգույշ լինել, որովհետև երբեմն նրանք լիովին անկախ չեն:
Շատ կարևոր է ուժեղ լրատվամիջոցներ, ինչպես նաև ուժեղ անհատ-լրագրողներ ունենալ: Ու ես միայն կարող եմ խրախուսել բոլոր լրագրողներին, որ այս հարցին, առնվազն, արդար մոտեցում ցուցաբերեն, քննադատաբար վերաբերվեն և չկրկնեն ապատեղեկատվությունը: Ես ողջունում եմ այն փաստը, որ դուք ուժեղ լրատվամիջոցներ ունեք ու նաև ուժեղ անհատ-լրագրողներ, որոնք կարող են փոփոխություններ մտցնել՝ տվյալ թեմաներին անդրադառնալով: Լրատվամիջոցներին խորհուրդ եմ տալիս ավելի տեղեկացված լինել այս հարցից և ազնիվ ու արդար ձևով տեղեկություններ տարածել դրա մասին:

Հայկ Հայրապետյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան, քաղաքացիական գործերով փաստաբան
Թեմա՝ «ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտումները 2015-17 թվականներին»

ԼԳԲՏՔԻ անձանց ՀԿ-ի կողմից տրամադրված իրավաբանական աջակցության շրջանակներում կարելի է հանգել այն եզրակացությամը, որ ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտման զգալի մասը լատենտ է, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրենց իրավունքների խախտման դեպքում ԼԳԲՏՔԻ անձինք շատ հաճախ խուսափում են դիմել համապատասխան իրավապահ մարմինների: Չդիմելու պատճառները բազմաթիվ են: Նախ խտրականությունը արգելող օրենքի բացակայությունը, որը լուրջ իրավական բաց է: Նաև ԼԳԲՏՔԻ անձինք վստահություն չունեն իրավապահ մարմինների, բուն արդարադատության պրոցեսի, դատական համակարգի նկատմամբ: Այնուհետև պետական մարմինները կանխակալ ձևով են վերաբերվում ԼԳԲՏՔԻ անձանց: Կարևոր խոչընդոտ է նաև ԼԳԲՏՔԻ համայնքի իրավագիտակցության մակարդակի ցածր լինելը: Մասնավորապես ԼԳԲՏՔԻ անձինք տեղյակ չեն իրենց իրավունքների մասին, նաև այն մասին, թե ինչպես պետք է պաշտպանեն իրենց իրավունքները, ինչ պետական մարմինների կամ հասարակական կազմակերպությունների կարող են դիմել, որոնք են այն մարմինները, անձինք, կամ իրավապաշտպան կազմակերպությունները, որոնք կարող են պաշտպանել իրենց իրավունքները թե պետական մարմիններում, թե միջազգային ատյաններում:

Արա Ղարագյոզյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի քրեական գործերով փաստաբան
Թեմա՝ «ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքների խախտումները 2015-17 թվականներին»

Պետական մարմինները, ոստիկանությունը, դատախազությունը և հատուկ քննչական ծառայությունը կոծկում են այն գործերը, որոնք խտրականության հողի վրա են իրականացվել, մյուս կողմից հովանավորում են այն ոստիկաններին, որոնք բռնության են ենթարկում ԼԳԲՏ անձանց, իսկ քրեական գործ հարուցվելու դեպքում էլ դրանք կարճվում են: Լինում են դեպքեր, երբ ԼԳԲՏ անձինք վախենում են և մինչև վերջ չեն բողոքում: Պետական մաիմինները չեն ուզում ընդունել այն փաստը, որ ԼԳԲՏ համայնքի նկատմամբ չպետք իրականացվի խտրականություն:

Սեփական փորձառությամբ կարող եմ ասել, որ դատական պրոցեսների ժամանակ դատավորները ծիծաղում են կամ ծաղրանքով են վերաբերվում այն փաստին, որ անձը խտրականության է ենթարկվել իր սեռական կողմնորոշման պատճառով: Դրանից բացի այն փաստաբանները, որոնք ԼԳԲՏ անձանց իրավունքներն են պաշտպանում, անվանվում են «այլասերվածների պաշտպաններ»:
Մենք մեծ աշխատանք ունենք անելու նույն այդ դատավորներին, դատախազներին և քննիչներին վերապատրաստելու համար այն դիտարկմամբ, որ մենք մարդու իրավունքներ ենք պաշտպանում, այլ ոչ թե «այլասերվածների»:

Մարո Խաչատրյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի ռազմավարական գործերով փաստաբան
Թեմա՝ «ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության խնդիրները ռազմավարական գործերով»

2014թ.-ից սկսած «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ -ի միջոցով սկսվեցին մի շարք դատավարություններ ուղղված նույնասեռական անձանց իրավունքների

և նրանց հիմնախնդիրներով զբաղվող իրավապաշտպանների և իրավապաշտպան կառույցների պաշտպանությանը:
Քաղաքացիական ոլորտում այդ պաշտպանությունն ուղղված էր իրավապաշտպանների պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցմանը, որում հատկապես բարձրացվել էր խտրական վերաբերմունքով և ատելության խոսքով պատճառված վնասի հատուցման հարցը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անխտրականության մասին առանձին օրենք չկա ՀՀ իրավական համակարգում, ապա գործում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, որի համաձայն յուրաքանչյուր կողմ ինքն է կրում իր վկայակոչած փաստերի ապացուցման բեռը: Հետևաբար, գործը քննվեց ընդհանուր կարգով և դատարանը մերժեց խտրականության և ատելության խոսքի միջոցով պատճառված վնասի հատուցման հարցը, սակայն մասնակիորեն բավարարեց զրպարտության և վիրավորանքի մասով: Մեկ այլ գործով ատելության քարոզ էր իրականացվել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի դեմ, ինչը կապված էր ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության գործունեության հետ: Դատարանը արձանագրեց, որ վիճարկվող արտահայտություններն օբյեկտիվորեն, այսինքն՝ իրենք իրենցով, ատելություն են քարոզում, սակայն ազատեց պատասխանատվությունից որպես կարծիքի արտահայտում: Խնդիրն օրենսդրական բացի հետ էր կապված, քանի որ խտրականությունը և ատելության քարոզը, որում ներառվում է նաև խտրականությունը փոքրամասնությունների նկատմամբ, բացարձակ արգելք է, հետևաբար պատվի և արճանապատվությանը պատճառված վնասի կարգավորումներում առանձին ամրագրման կարիք կար: Սույն բացի խնդիրը բարձրացրեցինք ՀՀ սահմանադրական դատարանում, սակայն դիմումի ընդունումը մերժվեց այն հիմքով, որ չկա նորմատիվ ակտի պահանջը: Ես կարծում եմ, որ նման հիմնավորման կարելի էր հանգել դիմումի քննության, ոչ թե ընդունման հարցի պարզման դեպքում:

Ունենք գործ կապված նույնասեռական անձի վարորդական իրավունքի սահմանափակման հետ, քանի որ ՀՀ զինված ուժերում զորակոչի պիտանելիության ստուգման ժամանակ արձանագրվել էր նրա հոգեկան հիվանդությունը: Ընդ որում այդ եզրակացությունից հավաստվում է այն փաստը, որ անձը ճանաչվել է հոգեկան հիվանդ միայն իր սեռական կողմնորոշման մասին հայտարարելու հիմքով: Սույն գործով արծածվում է այն խնդիրը, որ նույնասեռական, անձը ճանաչվելով հոգեկան հիվանդ, մեկուսանում է մի շարք ոլորտներից, տեղի է ունենում սեգրեգացիա:

Արման Ղարիբյան
Լրագրող
Թեմա՝ «ԼԳԲՏՔԻ անձանց իրավունքները մեդիայում. ինչպես հաղթահարել խմբագրի արգելքը»

Ցավոք, ես կարող եմ մեկ ձեռքիս մատների վրա հաշվել այն խմբագիրներին, որոնք խրախուսում են այս թեմայի լուսաբանումը: Նաև խմբագիրների մեծամասնությունը լրագրողներին ասում են, որ երկրում առավել կարևոր թեմաներ կան, և պետք չէ այս թեմային անդրադառնալ:
Ավելին, խմբագրության ներսում այն լրագրողները, ովքեր փորձում են հետևողականորեն լուսաբանել ԼԳԲՏ անձանց խնդիրները, ենթարկվում են ճնշումների գործընկերների կողմից: Ուստի կարևոր է խրախուսել այն լրագրողներին, ովքեր կարողանում են նման պայմաններում լուսաբանել ԼԳԲՏ անձանց իրավունքները Հայաստանում:

Աննա Նիկողոսյան
Փորձագետ
Թեմա՝ «Վերափոխելով ԼԳԲՏՔԻ անձանց մասին դիսկուրսը մեդիայում»

Առաջին խոսույթը, որ առանձնացրել եմ, այն է, որ ԼԳԲՏ անձինք ներկայացվում են որպես ազգի թշնամիներ, և մեդիայի կողմից արտադրվում և վերարտադրվում է մի համակարգ, որի ծայրում հայկական արժեքներն ու ավանդույթներն են, իսկ մյուս ծայրում՝ ԼԳԲՏ անձինք՝ ի հակադրություն այդ արժեքների և ավանդույթների:Շատ հաճախ նրանք նաև վերածվում են քաղաքական խաղերում կիրառվող գործիքների: Մյուս խոսույթը կոչել եմ ԼԳԲՏ անձինք որպես բռնության զոհ, որը մեդիայում ԼԳԲՏ անձանց արտադրում և վերարտադրում է որպես զոհերի:

Մյուս խոսույթը կոչել եմ ԼԳԲՏ անձինք որպես բռնության զոհ, որը մեդիայում ԼԳԲՏ անձանց արտադրում և վերարտադրում է որպես զոհերի: Արդյունքում ԼԳԲՏ անձանցից խլվում է գործունության հնարավորությունը: Ունենում ենք ԼԳԲՏ անձ, ում պայքարը, հաղթանակները որևիցե կերպով չեն արտացոլվում մեդիայում:
Հաջորդ դիսկուրս այն է, որ ԼԳԲՏ համայնքը ներկայացվում է որպես միատարր համայնք, երբ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր և այլ անձինք և նրանց տարաբնույթ խնդիրները ներկայացվում են որպես միատարր խնդիրներ և խոչընդոտներ: Այս դիսկուրսը ևս մեզ վերակերտում է որպես «այլ»-երի:

Արման Սահակյան
«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի բազմազանության և հավասարության ծրագրերի համակարգող
«ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ-2016» մրցանակաբաշխության ամփոփում

Մրցանակաբաշխությունը որպես այդպիսին շատ կարևոր է այն առումով, որ դեռևս 2015 թ.-ից վեր է հանում ԼԳԲՏ անձանց իրավունքների մեկնաբանությունները հայաստանյան մամուլում:
Նախորդ տարիներից ձեռք բերված փորձի հիման վրա փորձում ենք առավել օբյեկտիվ լինել լրագրողական նյութերն մեր տված գնահատականների մեջ: Սահմանել ենք այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են նյութի մեջ խտրական բառապաշարի բացառում, համապարփակություն, արդիականություն, գրագիտություն: Հուսով ենք, որ մյուս տարվա մրցանակաբաշխությանը կներկայացվեն ավելի պրոֆեսիոնալ և անաչառ նյութեր, ինչը ինքնին առաջընթաց է ԼԳԲՏ անձանց իրավունքների օբյեկտիվ մեկնաբանության տեսակետից:

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ
Հատուկ թողարկում

«ԲԱՁՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ 2016»

«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

New Generation Humanitarian NGO

@ngngoARMENIA

ngngo.armenia

TEC-IT.COM